# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԶԳԵՍՏ-24/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 5 | Գարնանային-աշնանային բաճկոն՝ սև 92% նայլոն, 8%լայկրա կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով: Բաճկոնին ամրացված է կարգավորվող գլխանոց: Բաճկոնի ձախ լանջափեշի վերին հատվածում՝ կենտրոնական շղթային զուգահեռ, 1.5 սմ հեռավորության վրա 16 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպան է, լանջափեշերի երկու կողային հատվածում՝ կենտրոնական կոճկվող շղթային զուգահեռ, պլաստմասե շղթայով փակվող գրպաններ են (22 սմ): Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Երկու թևքերին դեպի ներս ուղղահայաց շղթայով փակվող գրպաններ են:Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ՀՀ զինանշանի կարմիր եզրագծով թևքանշանն է, իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ Հակակոռուպցիոն Կոմիտեի կարմիր եզրագծով թևքանշանը (Ձև 10, Նկար 3): Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: Գարնանային-աշնանային տաբատ՝ սև 92% նայլոն, 8% լայկրա կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր 3 եզրագիծ, 2-ը՝ 2 սմ լայնությամբ, իսկ մեջտեղինը՝ 1,5-2 մմ (Ձև 10, Նկար 3), երկու կողային գրպաններով, հետնամասի վրա կափույրով և կպչունակով փակվող երկու վրադիր գրպան է: Գոտին՝ երկու կողքերից էլաստիկ ժապավենով ձգվող: Տաբատը՝ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 8 հատ գոտեմակ օղակներ են (Ձև 10, Նկար 1, 2): Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԶԳԵՍ-24/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 5 | |